Դեպի գպրոցն են հոսում ձյունը կոխկրտելով:  
Շտապում են, աղմըկուս ու ձեն տալիս իրար,  
Զյունաթաթախ տրեխներն ամուր խոսում գետնին:  
Ներս են լցովում, ճխտրվում, ճզմում փոր ու իրան.  
Քիչ և մնում, վոր Մուքոն հարևանին հեծնի:

Ու շրջանից՝ գործուղված Սամսոն Սաղաթելյանն  
իր զեկուցումն սկսեց տագնապալից խանդով:  
Եղ զեկուցում եր արզիոք, թե խոսքերի սելավ՝  
Կաղնիների գարավոր արմատները քանդող:  
Զայնը, սաստիկ կտրված, շնչավողն և քերում:  
Բայց նա ձմյոնն ինչ և անում. նա խոսում է կրկին  
Նա խոսում է քրտնաթոր, գլխով ու աչքերով,  
Արագաշարժ գծերով իր ձեռքերի, դեմքի:  
Վերջին յերեք որվա մեջ տասը դյուզ ե անցել  
Տասը ժողով հբավիրել, ասել և տասը ճառ,

Գրպանում տասը ցուցակ ու տասը բանաձե,  
Նա պիտի վաղ առավոտ վերագառնա շրջան:  
Նա այնպիս ե կրակվում, վոր ուզում և կարծես  
Այրել իր թեժ խոսքերով ինչ վոր «հին ե, քարթու»,  
Բոլոր հարցերը խրթին մի վայրկանում պարզել  
Ու կոմմունիզմ կառուցել յերկու ակնթարթում:

Զեկուցողի մոտ նստած շողշողում և Սողոն,  
Ու նայում և ժողովին հպարտ, աքսրավիզ:  
Կարծես թե ինքն ե խոսում՝ այդքան վարժ ու վողորկ:  
Կարծես ինքն և խոսովին գիծ, ուղղություն տալիս:  
Կնձիուները ճակատին, զանգը ջլուտ ձեռքում՝  
Մտածում ե Գարսեանն իր մեջ խորասուզված:  
Կամ անհամբեր, ջղալին զիմումները թերթում  
Ու նայում և ժողովին՝ անասելի հուզված:  
Քեռի Մուքոն կենդանի լսողություն և վողջ.  
Զեկուցողին ե նայում՝ առաջ թեքված մի քիչ՝  
Բերանը լայն բաց աբած, վորպիս ժայռի խոռոչ,  
Բեխսմիրուքի անթափանց մացաների միջից:  
Իսկ Շառոյի Մուշեղը, սրտում յերկու խլուրդ,  
Ցերկու գիմում և պահել յերկու գրպաններում՝  
Մեկը կոլխող մանկու, մցուսը՝ դուրս գալու:  
Իսկ առաջմ լսում ե... լսում ու... համբերում,

Զեկուցումը վերջացավ ճակթուն ծափերի տակ:  
«Պուճաւը» Վաղոն հաղթական իր քրտինը սրբեց:  
Խաչոն քնից վեր թռավ, ու բանկվից ծիծալ:  
Հետո հարցեր թափկեցին վարար կարկտի պես:  
Թննության հերթը հասավ ընկեր Ալեքսանին.  
— Ուշացել եմ, ընկերներ, հերս չե համոզվում:

Յեղ դիմեցի զցուղխորհուրդ, բաժանվեցի տանից:  
Այժմ ձեղ հետ միասին պաշքարել եմ ուղում:  
— Թուլ տուր, ընկեր նախագահ! — Առարկում ե

Սողոնու—

Մի շան գլուխ կա հստեղ, շատ խորամանկ հաշիվ...  
Մենք կոլեկտիվ ենք մտել ամբողջ տնովակով  
Ու չենք կիսվել, չենք դառել յերկույթերեք բաժին՝  
Վոնց վոր ընկեր Ալեքսին. հորը տանն ե թողնում,  
ինքը մենակ է գալիս ու կոլեկտիվ մտնում:  
Նա ուղում ե, ընկերներ, կոլեկտիվը քանդել  
Զի կարելի, ընկերներ, պետք ե կամ դես, կամ գեն  
Կամ թող իր հորն ել բերի, կամ թող ինքն ել չդա:  
Սուտ ե, նրանց մեջ կոխվ, բաժանություն չկա:  
Գյուղիորհուրդը չի քնած, Սողոն խոտ չի ուտում:  
Զի հաստատովի եսպիսի սարքած բաժանություն:

Հարցը լուրջ եր չափազանց ու խորամանկ դրված:  
Այս — պետք չեր ընդունել կեզծ բաժանվողներին:  
Սոգոն մեջտեղ եր բերել անհաղթ մի պատրվակ:  
Ու վոչ վոք սիրտ չեր անում յենի, հակածառի:  
Այս վոչ վոք չի ուղում, վոր հս բեանն իրա:  
Կիսատ մտնի կոլեկտիվ, կոմուրջ թողնի յետե:  
Ավելի լավ ե — միասին, առաջ տալով իրար,  
Մինչև ճամփան հարթըլի, բացվի հետզհետե:  
Այս — շատ կան, վոր մտել ու մտնում են հիմա  
Կոլխոզական հոսանքի ջրավտույտի մեջ, —  
Հարեանին են նայում, — յեթե զնում ե նա,  
Իրենք ել են սկսում դեպի առաջ դիմել:  
Իսկ յեթե նա տատանվում ու նայում ե յետե,  
Յետ դառնալու նշաններ թողնում ճամփի վրա,

Նրանք արդեն շտապում են իրենց ափ նետել  
Ու յետ գառնալ մի վալրկիան հարեանից առաջ:  
Բայց կան մարզիկ, վոր անշեղ առաջ են ընթանում՝  
Պայծառ աչքերը հառած ազատարար ափին:  
Նրանք գնում են ընդգեմ ալիքների, քամու,  
Վոչ մի արգելք չի կարող նրանց զինաթափին:  
Նրանք են ջուրը հեղքում, բացում ճանապարհ  
Ու նավն առաջ են տանում համառ ու անզիջող,  
Ալիք նրանք են մաքառում, քալում հերոսարար  
Թշնամական կատաղի վոռնոցների միջով:

Այս, վոր Սողոն առարկեց Ալեքսանի մասին,  
Շատ շատերին պղտորեց.

— Ճիշտ ե ասում, — ասին,  
— Ինչու հորը չի բերում, ինքն ե մենակ դիմել...  
— Ի՞նչ իմանանք, ի՞նչ անհայտ խորհուրդ կա օրտի մեջ...  
— Յերկու մսուր ե ուղում հոր խելացի վորդին...  
— Վոր հոր տանը աշխատի, կոլեկտիվում ուտի...  
— Վոր եղան ելինելու դիմումն յետ ավելք...  
— Բատ եցության...  
— Միք գոռա...  
— Միք աղմըկի, տղեք...  
— Թուլ տուր, թուլ տուր. — տաքացալ

տեղից չովաս քեռին  
Ու զոս տվավ սրտմտած լեզվին ու ձեռքերին. —  
Զեք ընդունում իմ տղին... Բնձ ուր եք անպատվում,  
Ես ևս են, համ, ընկերներ, կեղծնախնկեղծը զատվում:  
Իմ տղին միք ընդունի, ընդունեք Սանթրոսին,  
Կուլակների համար թող Սողոն բարեխոսի...  
Ո՞վ ե հստեղ հարազատ, յիս, թե Զաթնանց Սողոն,

Վորը գեմ ե կոլխողին իրա ամբողջ ցեղով...  
Հանկաշծ ելի բոնկվեց թալփայական վոդին,  
Ել վոչ վոք չի ինայում, չի նայում վոչ վոքի:  
Ու վեր կացավ Գարսեանն, ուժգին զանգահարեց  
Զանդը խփեց սեղանին ու ջղային գուաց:  
Տիրեց ծանր լուռթյուն Նա խորը շունչ առեց  
Յեվ սկսեց՝ սկ աչքերն Ալեքսանին հառած:

— Բնկեր Սողոն, ընկերներ, հարցը դրեց ու դիզ:  
Այս, մենք չենք ընդունի կիսատ լեկողներին:  
Տեսակետը ձիշտ եւ Բայց ընկեր Սողոն հետո  
Խոշոր սխալ կատարեց... ուղիղ տեսակետով:  
Նա ուղում եւ շպրտել լեշիտասարգ տղին  
Դեպի ուղին հետադեմ գեպի աշխարհը հին  
Նրա հերը չի գալիս, ծերունի լեւ համառ.  
Աշխարհը չի կործանվի մի ծերունու համար:  
Բայց մենք ունե՞նք իրավունք Ալեքսանին վանիլ,  
Բաղզը կապել պառավին, ապագան սպանել  
Յես բնավ չեմ կասկածում Ալեքսանի վրա:  
Ինձ հայտնի յի մանրամասն պատմությունը նրա:  
Նա կոլխողի շարքերում մեզ հետ կը պատքարի:  
Չի հեռանա, չի փախչի կիսաճանապարհից:  
Նա յեկել եւ բանակից, նա մերվել և մերոնց.  
Յեվ նա կարող եւ գառնալ առաջավոր հերոս:  
Նա իր հօրն ել կրերի մի ժամանակ հետո:  
Քեռի Հովասն ել կգա իմ խոր տեսակետով:  
Բնկեր Սողոն թող իզուր իր եշտ առաջ չանի,  
Մենք կոլիկտիվ կրնդունենք ընկեր Ալեքսանին  
Ինչպես ամպոտ լերինքի կախարդական մազից  
Արևախաշ արտերին առատ անձրե մազի,

Այսովես ազգեց Գարսեանն ուղեղների վրա,  
Փափկացրեց չոր կողերն ու համոզեց նրանց:  
Միայն Սողոն չղիջեց, մնաց անդրդվելի  
Յեվ իր գիծը հաստատուն շարունակեց ելի:  
Իսկ ժողովը մեծ մասով անցավ Աևանի կողմ,  
Յեվ Սլեքսանն ընդունվեց ծափով ու ազմուկով:

Յերբ ազմուկը զաղարեց, կրքերը մեղմացան,  
Գրապաններից հանեցին դույլասարի թութուն.  
Նիստի վերջին շարքերից Արելը վեր կացավ.  
— Կարելի՞ յի յերկու խոսք... ներողություն:  
Յես իմ կողմից, ընկերներ, պետք եւ ասեմ անկեղծ,  
Վոր ընկերը լավ խոսեց, կարգին ել հասկացանք:  
Դես չեր անցել մեր գյուղով Սամսոնի պես ընկեր,  
Վոր մասսալի մեջ տաներ հսպիսի աշխատանք:  
Պարզ եւ ըրեմին, ընկերներ, վոր մեր իշխանությունն  
Ուզում եւ վոր լավ ապրենք. երթանք ուղիղ ճամփով:  
Մեր միջի մարդն եւ ելի ժողովրդին գցում  
Ու գործերը չի վարում իշխանության կամքով:  
Այս, կունկտիվ հիմնեցինք... բայց մեր գյուղում կա մարդ,  
Վորին հըռում ենք հեռու «կուլակ ե, ձայնազորկ»:  
Բայց, ընկերներ, թուլ տվեք, որինակի համար,  
Մեր տանը տոն ե այսոր, կուլակի տանը՝ սուզ:  
Ախալեր, ախար ի՞նչ կուլակ.. նա դիմում ե գրել,  
Վոր կոլեկտիվ ընդունես, ել ո՞ւր ես թագցընում  
Թի չե ուղում ես հանել թայֆայական վրեժ,  
Մարդու վրեն կուլակի անուն ես փակցնում:  
— Եղ ո՞ւմ մասին ես ացպիս բարեխոսում, Արեւ—  
Վըա տվին տեղերից մի քանի ձեն միասին:  
— Ինչո՞ւ պէտի չխոսիմ, բիրանս չեն կապել...

Յես խոսում եմ հալածված էկը Սանթրոսի մասին,  
Ելի ժողովն աղմկեց: Ելի Հովան քեռին  
Յերկու ձեռքելը պարզած «թուլ տուր, թուլ տուր» —  
Ելի՝ սաստիկ սաստելով կոմունալիստներին՝  
Բնկեր Սոլոն հարցական զեկուցողին նայեց:  
Թարսևանը վեր կացավ. զանգահարեց ելի.  
— Հասկանո՞ւմ եք, ընկերներ, առաջարկում ե նա,  
Վոր կոլեկտիվ ընդունենք մորթը փոխած գելին,  
Վոր թունավոր վորդն ելի մեր աղիքում մնա:  
«Մեր տանը տոն ե այսոր, կուլակի տանը՝ սուլ»...  
Լավ ե ասում. իսկ աբջուք, սուլ չի՞ լեզել մեր տան,  
Յեվ կուլակը մեղ համար թափել ե արտասուք,  
Թե՞ մեր սգովն ե արել և հարսանիք, և կանք:  
Ով խզնում ե կուլակին, ով խզնում ե Զաթնանց,  
Դավաճան ե կամ հիմար, կորած վոտով գլխով:  
Կուսակցությունն, ընկերներ, մեզ լողունդ ե տված՝  
«Մի թողնի այծին բռատան և կուլակին կոլխող»:  
Մենք հասկանում ենք նրանց քաղցրամեղրեկ լոկուն,  
Նրանց ստոր տաքտիկան, նրանց հաշիվը բարդ.  
Նրանք ներսից են հիմա մեղ կործանել ուզում,  
Սա դիմում չի, ընկերներ, այլ խորամանկ թակարդ:  
— Դե վոր եղակեն եք խոսում՝ դիմումն յետ տվեք, —  
Գոռաց Արելը մոլի ու տեղից վեր լելավ: —  
Մենք եսպիսի կոլեկտիվ չենք ցանկանում... աղեք,  
Սրանք եգուց բոլորիս կդարձնեն կուլակ:  
Կամ գեղովի կոլեկտիվ, կամ վոչ մի կոլեկտիվ,  
Ով վոր եսպիս ու ուզում, թող հետեւ նա մեղ: —  
Ու հրելով, ճեղքելով հուզված ժողովը դիմումը՝  
Նա մի քանի մարդկանց հետ զեաի գուռ դիմեց:

Վերջին կանգնած շարքերից հետեւյին նրան.  
Նախ առանձին-առանձին, հետո մասսալորեն,  
Անսասելի զայրությով շինեց Սաղաթելյանը:  
Սողոն՝ սաստիկ շփոթված՝ իր ծոծրակը քորեց:  
Մուշեղ ամին հնամաշ արխալուխի ջերեց  
Կոլլեկտիվից դուրս գալու դիմումը դուրս հանել՝  
Վախճանին եր սպասում ես նոր միջադեպի  
Յեկ նայում եր դեպի դուրս անվճռական, անել:  
Քեռի Մուքոն վեր կացավ սաստիկ տարակուսած:  
Նա սկսեց յիտ կանչել զուրս գնացողներին:  
—Ես ի՞նչ քամի յե մտել սրանց փորերն...—ասաց  
Ու ձեռքն ամուր թափ տալով, տեղը նստավ նորից:  
Մուշեղն ել իր զուրս գալու դիմումը չեր դրեց:  
Նա յել նստավ տեղնուտեղի, Մի քանիսն ել նստան:  
Դռան մոտից ել վոմանք վերադարձան տեղերն  
Ու մինչև իսկ դրսից ել կրկին վերադարձան:  
Գարսևանը տագնապով շրթունքները սեղմած՝  
Դրությունը փրկելու վորոնում եր մի յելք:  
«Պուճուր» Վաղոն Սամսոնին փսփում եր կամաց.  
— Նբանք ձեզ կհավատան, պետք ե հայտարարեք...  
Յեկ Սամսոնը, վոր վերջին յերկու յերեք որում  
Զեր հանդիպել այսպիսի ծանր ձախորդության  
Ու իր մտախն հաճելի այն միտքն եր գուրգուրում,  
Թե իր համար ել վոչ մի դժվարություն չկա,—  
Հանկարծակի յեր յեկել, շշել եր յերկուղից  
Թշնամու այդ առաջին հարձակումի դիմաց:  
Ուստի պատրաստ եր բռնել յուրաքանչյուր շուղից,  
Վոնց վոր ծովում ալեկոծ խորասուղվող մի մարդ,  
Վերադառնալ պարտըված, կոլլեկտիվը տված...  
Պարտությունը շրջկոմի նիստում խոստովանե՞...»

Վհչ... այս միտքը Սամսոնին սարսափելի թվաց:  
 Եվելի շուտ ինքնի ըեն ովքով նա կսպանեթ:  
 Ես այդ խնդրում «ինքնուրուցն» այն տհաւակեան ուներ,  
 Թե գլուղացին ինքնակամ կոլլեկտիվ չի մտնի:  
 Պետք ենուզ տալ մի տեղից, մի կերպ վախեցնել,  
 Վորպեազի նա խսկական ճանապարհը դանի:  
 Իսկ Գաբրեանն ինքնիրեն վորոշել եր արդեն,  
 Թե Արելի յետելից ով հմա դուրս դնաց,  
 Ողնեց միաբն կոլխոզին, մաքրեց ողը կարծես  
 Յեկ ժողովում խսկական կոլլեկտիվը մնաց:  
 Դրա համար զայրուցթով նա շրթունքը ծամեց,  
 Յերբ վոր Սամսոնն սկսալ պաշտոնական դիրքով.  
 — Ով վոր դուրս զա կոլխոզից, թշնամի յե նա մեղ,  
 Յեկ կորկենք հողերից ամբողջ ընտանիքով...

Ժամը տասն եր գիշերվա, յերբ ժողովը փակվեց:  
 Գաբրեանը խնդրեց, վոր կուսրջիջը մնա:  
 Դուրս հոսեցին հաղալով: Դասարանը պարզվեց  
 Յեկ սկավեց զոնափակ ժողովի այն ժամանակ:  
 — Զի կարելի, ընկերներ, աշխատել այս ձեռով,  
 Լոռությունը խղելով խոսեց Սեանը լիստ,—  
 Կուսրջիջի գծի գեմ դուրս ե զալիս Սոզոն:  
 Մաղ մնաց վոր տապալեր մեղ հարազատ տղին:  
 Իսկ յերբ վոր պետք եր խոսել Զաթնանց Արելի դեմ,  
 Ծնկեր Սոզոն սուս արագ...  
 — Ի՞նչ ե, ընկեր Սեան,—  
 Գոռաց Սոզոն կատաղի, — միտքդ ի՞նչ ե... զիտեմ,  
 Ուզում ես զու, կոլխոզում ամբանա քո թայֆան:  
 Յեկ ինքդ ել շատ լավ արիք, նպատակիդ համար...  
 Կոլլեկտիվից քշեցիր խելոք միջակներին...

— Գուցե Զաթնանց Սամթըռուը միջակ ե քեզ համար,  
 Դու պատրաստ ես ընդունել գուցե և տերտերին...  
 Հարկավոր չեն, ընկերներ, մեզ այնպիսի մարդիկ,  
 Վորոնց Արելն եր բերել և Արելն ել տարավ:  
 Հարկավոր չե, վոր Վաղոն մարդկանց ահաբեկի,  
 Բերի զոռով դիմումներ, զոռով համատարած...  
 Ընկեր Սամսոնը նույնապես կատարեց մեծ սխալ:  
 Հայտարարեց թշնամի դեռ տատանվողներին:  
 Զի կարելի, ընկերներ, խոսքերի հետ խաղալ:  
 Թշնամի՝ իս միթե մեզ, ասենք, Հովաս քեռին:  
 Սաղաթելլանը սաստիկ բարկանալուց շիկնեց.  
 Վո՞նց թե սիալ կատարեց ..ո՞վ ե քննադատում...  
 Նա լոկ սիրում եր լսել գովասանքի շշուկներ —  
 «Վո՞նց ե խոսում...», «Հալում ե և ականջդ կաթում»:  
 Դրա համար նա ջերից բլոկնոտն արագ հանեց:  
 Ինչ վոր գրեց բլոկնոտում շինծու համբերությումը:  
 Ծանը լոեց մի ըոպե ու սուր պատասխանեց.  
 — Ինքդ, ընկեր Գաբրեան, առաջ բերիր խուճապ  
 Համատարածը տալու վտանգ առաջ բերիր,  
 Քո սխալը մոռացար, մեզ ես վարկարեկում,  
 Բամբասիւմ ես շրջանից յեկած ընկերներին:  
 Հասկանում ես, վոր դրան ասում են աջ թեքում:  
 — Թե ով ե աջ, ով ե «ձախ», այդ կտեսնենք հետո,  
 Յես վաղ շրջան կդիմեմ այս բոլորի համար,—  
 Պատասխանեց Գաբրեանը կոտրված սրտով, —  
 Այն ել «ձախն» ել պարզվեցին այսոր միանգամայն...

ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ

Զաթնանց գերդաստանն անհուշ որերից  
Յեղել ե գյուղում անվանի հարուստ:  
Զավթել ե նա միշտ լավը հողերի:  
Տորենն ե փթել Զաթնանց ամբարում:  
Աճել ե ժամի ամպ-հովանու տակ,  
Վորպես հաստաբուն մի ընկուզենի,  
Փռելով գյուղում արմատներն անտառ՝  
Ծծել ե նրա հյութը վայրենի:  
Ծծել ե արլունն, ուղեղը նրա,  
Ու աճել փարթամ, կանաչել ե միշտ:  
Հետո տարածել մութ գյուղի վրա  
Իր շուքը մոալ, վորպես «հովանի»:  
Իշխել ե գյուղում վորպես տանուտեր,  
Վորպես մի վայրի կառավարություն:  
Արորն ու յեղն են նրան սնուցել  
Ցարական դաժան ուժիմի մուժում:  
Ցեղ կուչ ե յեկել թշվառ գյուղացին  
Զաթնանց դարավոր ընկուզենու տակ՝  
Աչքերը հառած ավելցուկ հացին,  
Իր վողորմելի բախտին անդիտակ.

Ու յերբ վոր Զաթնանց վողորմած Խաթունը  
Նրա քրտինքով լցված ամբարից  
Նբան, աջ ձեռքով, ձախ ձեռքից թագուն,  
Տվել ե մի բուռ բորբոսնած գարի,—  
Վերցըրել ե նա ու հաղար բերան  
Որհնել ե Զաթնանց հարստությունը,  
Ու վողջ գավառում տարածվել արագ,  
Զրնգացել ե Զաթնանց անունը:

Ու «Մալը աթուին» հայտնի յէ յեղել  
Զաթնանց անունն ու հարկը հյուրընկալ:  
«Վեհափառն» «անման կոնդակ» ե հղել,  
Որհնել ե Զաթնանց վար ու ցանքն ու կալն:  
Յեկ «Յերանելին» Խրիմյան Հայրիկ,  
Ուրախ շոյելով միրուքն սպիտակ,  
Հանգստացել ե Սևան գնալիս  
Զաթնանց անվանի ընկուզենու տակ:  
Գյուղական համեստ սպաս ե կերել  
Այդ կեղծ ռամկասեր եջմիածնականն,  
Ու Զաթնանց բաղում մեղքերը ներել,  
Փառավոր խղճով անցել ե Սևան:  
Իսկ Զաթնանց Սանթրոսն որհնված բահով  
Ճեղքել ե զլուխն աղքատ Ռուշանի,  
Հավշտակել ե ընտիր Սևահողն  
Ու սովի մատնել մի տուն ընտանիք:  
Մեռել ե Ռուշանն եդ վերքից հետո  
Ու ման ե յեկել Սանթրոսն անողատիք:  
Դատարան մըտած հիսուն մահեթով  
Դարձել ե չհաս, չենթակա դատի:  
Գյուղը վրդովվել, հուղվել ե սաստիկ,

Անզոր զալրութով բռունցքը սեղմել,  
Հաշտվել ե հետո արյունոտ փաստին  
Յեկիր անձարակ զալրութը մեղմել:  
Յեկ մոռացել են աղքատ Ռուշանին,  
Խղճի բերանը խցկել նբանով,  
Վոր հաց են տվել «աղիդ որերին»  
Ռուշանի թշվառ, մուրացող կնոջ,  
Զավթել են այդպես ու կերել-մարսել  
Զաթնանքն Ռուշանի հողը բերքառատ:  
Բայց հին անունն ե վրան մնացել  
Գյուղում ասում են «Ռուշանի Քաբափ»:

Զանգվի ձորափին, գյուղից քիչ հեռու,  
Մի ապառաժոտ բլուրի ներքո,  
Երջապատված եր պտղածառերով  
Ռուշանի քարափին: Ու կանաչ ներկով  
Եերեսում եր մերկ ծառերի միջից  
Զաթնանց Սանթրոսի սիրուն պատշամրը.  
Եերը վոր ճեղքելով ճյունի շերտը խիտ՝  
Նրանք յերեքով մոտեցան շտապ:  
Քամփը, կատաղի, նրանց գեմ վագեց,  
Զգալով կարծես ահավոր վտանգ:  
Փայտի հարվածից վոռնաց, գազազեց,  
Բայց ելի համառ պայքարի մասավ:  
Սանթրոսն ու վորդին յերան պատշամբ:  
Ալեքսանն ասես ուղեց բարեկել,  
Բայց զսպեց իրեն ու սուր հեգնությամբ,  
Գունատված, նայեց պատշգամբն ի վեր:  
— Ի՞նչ եք կամննում, — հարցըց Սանթրոսը, —  
Ահից աղճատված ժպիտն յերեսին:

— Յեկել ենք մի խիստ կտրենոր խնդրով,  
Նախ շունդ կապիր — ասավ Աղասին: —  
Հետո հավաքվիր, քսանչորս ժամից,  
Սուս ու փուս, հանգիստ, զնա Ռուշանից,  
Ռուշանի Քարափին ալես քոնը չի,  
Դու վրչինչ չունես քարափի միջին:  
Սանթրոսը մեկեն գույնը թոցրեց:  
— Ի՞նչ... աքսորժում եք... մուշաց վորդին:  
Նա մոլի բնազգով բահը վերցրեց  
Ու անզոր վոյսով շպրտեց գետին:  
— Բանդ քեզ պահի... Քշաց Ալեքսանը:  
Վախեցող չկա կուլակի բահից:  
Շուտով կհասնի աքսորելու ժամն  
Ու կտքսորենք ել, շատ մեք շտապի:  
— Զե՞ վոր յես զիմում տվի կոլխոզին, —  
Բղավից Սանթրոսն. — Տւր զնամ, ասա,  
Ես սաւնամանի ձմեռվա կեսին  
Ո՞ւր եք աքսորժում, ընկեր Ալեքսան:  
Տո, գալիս եմ ե, սանահեր Մուքո,  
Ինձ ել ընդունեք, միանամ, յեղբայր:  
Տամ տասերկու յեզ, յերեք ձի, ութ կով  
Յերկու հարյուր ու յերեսուն վոչխար:  
Զաղացս ել արդեն Փոկն և զրափել.  
Ել ի՞նչ եք ուղում սրանից ավել  
Ախար ուր գնամ սեփական տանից,  
Դև մորթեք, ելի, թաղեք կենդանի:  
Յես տուն եմ շինել փափաքով բարի,  
Բաղչա յեմ տնկել, հասցըել բարի,  
Կյանք եմ մաշել Ե, քրտինք եմ թափել  
Եղ վժնց եք ուղում քրտինքս լափել...

Պոռթկաց Ալեքսանն անհատակ վոխով  
 Ու պատասխանեց դառն ծիծաղով.  
 — Ել, Սանթրոս աղա, եղ վհնց ես ճառում, —  
 Ում քրտինքով ե վազել քո առուն  
 Ում պապն ես ձորում քո բահով ընկել  
 Ում հերն ե քո ես ծառերը տնկել,  
 Ով ե տանջվել շոգին ու ցրտին, —  
 Իմ պապն, իմ հերը, յն—նրանց վորդին:  
 Մեղնից ես խելք, յնտ տուր ելի մեզ,  
 Իսկ դու յել գնա աշխատանք ճարի,  
 Թող քո ես սիրուն սենյակների մեջ  
 Կոլեկտիվ իրա զործերը վարի:  
 Ալեքսանն անզուսպ վոխով եր խոսում,  
 Խայթում Սանթրոսին և նրա տղին:  
 Բելքուզ հուզված կծում եր լեզուն  
 Յեվ սպասում եր լուռ ու կատաղի:  
 Դիվական ուժով զսպում եր իրեն,  
 Վոր չվերցընի բահը շպրտած,  
 Վոր ամբարտավան Ռուշանանց տղեն  
 Իր պապի տեղում չընկնի թպրտա...  
 Յեվ հասկանում եր թուզ Ռուշանի  
 Նրա աչքերի թունավոր լեզուն:  
 Ուստի նա ցուց եր տալիս սուր ժանիք  
 Յեվ ավելի սուր ու խորն եր խոցում:  
 Զար ծղրտոցով դուրս թռավ տանից  
 Սանթրոսի կինը — Հոռոմսիմ Զալոն:  
 Հայոյեց, թքեց նա Ալեքսանին,  
 «Կերած աղունացն» երևին տալով:  
 Ու հետզետե խառնըվան վեճին  
 Սանթրոսի հարսերն անգամ չխոսկան:  
 Յերախաները շունն արձակեցին

Ու հայնոյելով, լալով մեջ ընկան:  
 Սանթրոսը սաստեց ձալթող պառավին,  
 Լեզվանի հարսին ուղաբեկից վերի:  
 Շունն ելի կապեց ծիրանի ծառին,  
 Յերեխանիրին կարգի հրավիրեց:  
 Ու հետո խոսեց խռպոտ հուզմունքով.  
 — Ընկեր Ալեքսան, Աղասի, Մուքո,  
 Յերեխաներիս վիզը միք զարկի,  
 Միք զրկի աշնան ծառերի բերքից:  
 Ինձ ել ընդունեք, գբեք կողխողում  
 Սրանից ավել ել ի՞նչ եք ուզում...  
 — Ուրիշ վոչ մի խոսք. Ռուշանի Քարափից  
 Դուք կհետանաք մինչ վաղ յերեկո: —  
 Կրկնեց Ալեքսանն անզիջող ու բիրտ  
 Ու վերադարձան նրանք յերեքով:  
 — Շանսատակ կանեմ յնս ես լակոտին, —  
 Ֆշաց մոլեզին Բեյըուզն ու հեաց: —  
 Յերեկվա գյաղեն, տկլորն, անոթին  
 ես ինչ ե դառել, աստված իմ, աստված:  
 Զաթնանց տան վրա բերան ե ծովում,  
 Մեզ վոնտում են հողից պապական,  
 Ու վոչ մի ջամդակ վետին չի փովում,  
 Մտիկ ենք տալիս ոելիներս փակած:  
 Ես ուր հնք հասել, այ հեր, այ նանի,  
 Վայ մեր նամուսին ու գերդաստանին:  
 Ել համբերելու ույժ ու սիրտ չկա:  
 Յե՞րբ, յ՞ը վերջապես մեր հերթն ել կգա,  
 Քանդենք ես աշխարհն ու կարգը, վորտեղ  
 Մարդը բատրակին «ընկեր» ե ասում:  
 Բատրակ ե, պիտի տրորես, մորթես,  
 Ճիպոտ տաս մոթին որը քառասուն...

Համ հարցըի, ասին՝ Մկանն  
Ու Սողոն սերմը չեն զտել  
Տես, յեթե կա եդպիսի բան,  
Ես չեմ զտի վոչ մի հատ ել  
Իրենք նստած իրենց բանքին,  
Հենց խալխին են առաջ զցում,  
Մինչև Սողոն հոր չհանի,  
Ես չեմ հանի... ներողություն

ՏԱՏԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲՈՒՔԸ...ՄԱՐԴԸ, ՄԵԹԵՆԱՆ

Իուքն ե պարում ոձագալար! +  
Քամին իր սառ փողն ե ածում:  
Ու բքի հետ, բքահալած  
Զայն ե տալիս կատարածուն.  
— Մերմը, սերմը, բերեք զտեք,  
Միացրեք մի ամբարում,  
Ամբարդ բաց, քավոր Մհեշեղ,  
Հորըդ հանի, ուստա Հարութ...  
— Վայ քու անխիղճ Գաբսևանին.  
Ո՞վ ես բքին հոր կհանի: —  
Պատասխանեց ուստա Հարոն  
Ու ներս մտավ սրթարթալով:  
— Լավ, սերմացուս, ասեմ, բերի, —  
Պատասխանեց Մուշեղ բիձան:  
Ո՞վ կաշխատի ես ցրտերին,  
Դրսում, ես դառ բորանի տակ:  
Հըեն Գեռն ու Աղասին  
Սերմը նորից յետ բերին տուն:  
Սարսափելի ցուրտ ե, ասին:  
Տըիերը չի աշխատում:

Ներմազտման կամպանիալի  
Ժամկետն արագ անց և կենում:  
Մինչ վոռնոցով գազանային,  
Առանց մի ժամ ընդհատվելու,  
Բուքն ե գլուղի ճամփեք լիզում  
Շածկում, ծեփում դուռ ու տանիք:  
Բամբասանքը հազար լեզու,  
Խառնվում ե բուք բորանին:  
Ու վոչ մի մարդ մոտ չի գալիս:  
Սերմազտիչն անգործ կանգնել,  
Մինչդեռ գալիս են շրջանից  
Տագնապալից հրահանգներ:

Ո Գաբսևանը կանգնած բակում  
Նայում ե լուռ մեքենային:  
Լեռնաշում ե նրա հոգում  
Մի տիմրություն գերմարդկալին:  
Անիմսերը ձևան մեջ խրված,  
Բորանի դեմ հազարտ, մենակ,  
Ասես գլուղից վիրավորված,  
միտք ե անում եղ մեքենան:

Զգում ե նա մեքենայի  
Մտքերը սաս և խմասում:  
Այդ սեփական մտքերն ելին  
Տաբերքի դեմ կռվող մարդու:

Վերադարձավ կատաբածուն՝  
Բեխից կախված սառցի լուլան:  
— Ախտեր, զոչով հոր չի բացում,  
Քղավելով հոգիս ելավ:  
Ու հավաքվեց արիերի մոտ  
Սերմի հոգնած բրիգադան:  
Նրանք մհուան վորոնելով,  
Վոչ մի հարմար տեղ չգտան.  
— Մնացել ե միայն մի յելք, —  
Խորհուրդ արավ քեռի Մուքոն, —  
Մի ընտանիք տանից հանենք,  
Զուշ-փալասով ուղարկենք գոմ,  
Կամ թե հոգան հարևանի —  
Ել ճար չկա ե, ինչ անենք —  
Սերմազտիչն այնտեղ տանենք,  
Վոր գիշեր ու ցերեկ բանի:  
Այ լավ ասով քեռի Մուքոն, —  
Վրա տվին ժիր աղմուկով:  
— Լավ եմ ասում, զլիսիդ մատաղ,  
Բայց ո՞վ հիմի մեզ տուն կտա:  
— Քեռի Մուքոն, քեռի Մուքոն...  
— Իր խելացի համողմունքով:  
— Զեռ միք առնի, շուն շան վորդիք,  
Խորհուրդ տվի, խաթա ընկա:  
Այ Մողոլի տունը մոտիկ,

Ինքն ել — Սողոն կուսակցական:  
Լուռ նախցին Սողոյի կողմ:  
Զղայնացավ Սողոն սաստիկ:  
Հետո ձնշող ամոթանքով  
Ասավ. —  
Հերս համաձայն չի:  
Ալեքսանը մի ակնթարթ  
Պիտի ասեր մեր տուն բերեք,  
Բայց նետի պես զլիսով անցավ,  
Բաժանված ե տանից յերեկ:  
Զյունը փայտով փորփրելեն  
Տատանվում եր դեռ Աղասին:  
Նա ստիպում եր ինքնիրեն,  
Վոր խոսք բանա իր տան մասին:

— Հարկավոր չե ուրիշի տուն, —  
Ասավ Սևանն արհամարհուտ. —  
Տեղի համար զուր ենք վիճում,  
Յես տուն գիտեմ հարմար և մոտ:  
— Ո՞ւմ տունն ե այդ, — զեղնեց Սողոն:  
— Իմ սեփական, — պատասխանեց: —  
Դե, ընկերներ, ինչ եք դողում...  
Շուտ մեքենան փողոց հանենք:  
Վրա ընկան տղեք բոլոր  
Ու մեքենան փողոց բերին:  
Քեռի Մուքոն կարմրելով  
Զեռքը դրավ տրիերին.  
— Ընկեր Սևան... ներողություն:  
Սխալիցի յես խալտառակ...  
Թող մեքենան բերեն մեր տուն,

Ինձ են ասել նախ և առաջ:  
 — Մեկ ե, մեկ ե, քեռի Մուքո,  
 Դու յել մերն ես, քեֆիդ մտիկ:  
 Դարդ մի անի, լավ ե զու քո  
 Սերմը գնա բեր ու զտի:  
 — Դնամ բերեմ, գլխիդ մատաղ,  
 Զուրն ել կընկնեմ քո յետելից: —  
 Ու վոտքերով ձյունաթաթախ  
 Վաղեց Մուքոն փալտը թեին:

Կեսը հողում, կես հարկանի,  
 Մի կոնաձև յերդիկ ուսին,  
 Թոնըի վրա հնոց քուրսին —  
 Եսպես ե տունը Սևանի:  
 Սական յեթե մի քիչ մնա,  
 Ու աշքերիդ դեմ լուսանա, —  
 Դու կահսնես հին քուրսու քով  
 Հայանառից գնած վարկով  
 Մի գեղեցիկ գթասեղան՝  
 Մոմաշոք սփոց վրան:  
 Հետո լենին յերկու հատոր,  
 Վիեննական մի թիկնաթոռ:  
 Մի քիչ այն կողմ մըստ պատին  
 Հին հիշատակ մի պլակատի:  
 Հետո կըկին և պլակատներ,  
 Յեվ նկարներ մեծ դեմքերի,  
 Վոր պոկլել են, նորից փակցվեր  
 Վոր գեղնել են ու գունատվել  
 Հնադարյան թոնըի մըլից:  
 Ու խալտարդետ պլակատներից.

Վար, անկյունում, պատի տակի՞ն  
 Կճուձներ կան հաղարամչա,  
 Տարբեր ձեի ու հասակի:  
 Յեվ նրանց մոտ, վորպես տեսիլ  
 Դեռ չհայտնված մի թշնամու,  
 Վորպես ոտար քաղաքացի,  
 Պըպղել և մի պրիմուս:  
 Թիկն են ավել գոմի զըսան  
 Յերկու սաժեն տաշած քարի:  
 Ու հացենու տասը գերան՝  
 Գնված ելի Հայանառից:  
 Այդ — Գարսեանն անցյալ տարի  
 Ցանկանում եր շինել նոր տուն,  
 Դուքս գալ խավար գետնափորից  
 Ապրել առողջ, մաքուր ոգում:  
 Սական, յերբ վոր մեջ տեղ յեկալ  
 Կոլխողացման հարցը գյուղի,  
 Նա թողեց տունը սեփական,  
 Յեվ ընտրեց ուրիշ ուղի:  
 Վահ թե շինել փոքրիկ մի հուզ  
 Խառնափնթոր կույաերում այն,  
 Ազ կառուցել կոլեկտիվ գյուղ  
 Պլանավոր, լուսավոր, լայն:

Այդ կիսահարկ խրճիթի մեջ  
 Բնակվում են իրարու խառն,  
 Իրար ձուլված, իրերամերժ  
 Յերկու սերունդ, յերկու աշխարհ:  
 Ու նստոտած քուրսու բոլոր  
 Ծերուկ Բարթոն, Թեղուշ նանին,

Երենց կրտսեր վորդինելով  
 Սպասում են Գարսևանին:  
 Իսկ Սևանի կինը, Զարեն՝  
 Թուրսուց հեռու՝ սեղանի քով,  
 Նոր կենցաղի վոգուն վայել,  
 «Ավանգաբդ» ե կարդում մտքով:  
 Մլավում ե բուքը դրսում  
 Կատվի նման զարհուրելի,  
 Հուպ են գալիս նրանք քուրսուն:  
 Ու պատմում ե Բարթոն ելի  
 Իր հովվական արկածների  
 Գալարնակ սարի մասին,  
 Ու խեթ նալում սուտ տեղերին  
 Չհավատացող ջահել հարսին:  
 Վեց գայլ արդեն նա սպանել,  
 Մոտենում եր յոթերորդին,  
 Յերբ նովրուղի, Ալեքի հետ  
 Խրճիթ մտավ ավագ վորդին.  
 — Դեհ, վեր կացեք քուրսու տակից,  
 Ինչ կա-չկա տարեք հոդան:  
 Ա՛ հեր, դու յել նազլղ փակի  
 Ու ժանդոտած ուրագդ առ,  
 Բակի սյունը մի քիչ տաշի,  
 Դեմ ե առել մեքենալին:  
 Զարիկ, արագ տունը քաշի,  
 Թող յերեխին այան նալի:

Ծերուկ Բարթոն ուրագն առավ  
 Պապի տնկած սյունը տաշեց:  
 Սյունը հին եր, տեղից թուավ:

Քեռի Բարթոն խոր ախ քաշեց:  
 Ու ներս մտավ եղ մեքենան  
 Վոնց վոր մի սկ հսկա մողես:  
 Մի կարասի ուշքը գնաց,  
 Հողե թմբից վար գլորվեց:  
 Կարասի մոտ կանգնած թղուկ  
 Են պրիմուսն ուրախ խնդաց:  
 Նալեց մտնող մեքենային,  
 Վորպես հերոս մի սուրհանդակ:  
 Հնազարյան թոնըի կշտին  
 Կանգնեց հտպիտ եղ մեքենան:  
 Ու կուլ տալով կումը վշտի,  
 Պառավը խեթ նալեց նրան.  
 — Վոտքդ կոտրեր, չգալիր,  
 Զդիպչեյիր կարասիս:  
 Ա՛խ, իմ կարասը կարմիր,  
 Վախ իմ կարասն եր ազիզ:  
 Տեսա՝ գիշեր յերազում  
 Կարասըս տաղ եր ասում:  
 Զար յերազ եր, կատարվեց,  
 Տես, կարասըս կոտրվեց:  
 Սևան, վորդի, դուրս արի  
 Եղ գործերից ես տարի:  
 Յես վախում եմ, յես դողում,  
 Դուշման ունես դու գյուղում:  
 Սողոյին չեն բամբասում,  
 Քո մասին են բան ասում:  
 Ասում են նա յե արել,  
 Նա յե կոլխող հնարել:  
 Փսփսում են ամեն տեղ,

Թե կփախչեք ևս գիշերու  
Դու իւլ գիշեր չես դալիս,  
Յես նստում եմ ու լալիս:

— Նախ և առաջ յես կղտնմ, —  
Ասավ Սէեքն, — իմ սերմացուն: —  
Ու մեքենան զործի զրին  
Վորոտմունքով ամենացունց:  
Դղբացին ոճորք ու գուռ,  
Ու մուր թափից առաստաղից:  
Յեվ վորպես նոր մի կյանքի լուր՝  
Զայնը հասավ հեռու թաղին:  
Արդեն գյուղում, ևսեղոյ ենտեղ,  
Սկսեցին հորեր բանալ:  
Շալակներով կամ սելերով  
Սերմ են բերում, մարդիկ, կանալք:  
Սերմ են բերում, պիտի զտեն  
Ու միացնեն մի ամբարում:  
Այդ առաջին քարն ե արդեն  
Մի նոր աշխարհ կառուցելու:

Հոքն և հանում քեռի Մուքոն՝  
Բեխից կախված սառցի լուլան,  
Խորախորհուրդ մտածմունքով  
Շունչ ե առնում քուլա-քուլա:  
Ինքն ել գիտեր, վոր բուքը չեր  
Պատճառ, վոր նա հոր չեր հանում:  
Բուքն ինչքան ել ուժեղ փչեր,  
Կար մի ուրիշ, խոր տատանում:  
Նա պարզաղիս սիրտ չեր անում

Սերմը զտել ու միացնել  
Կարծես թե նա մի անանուն  
Մազե կամուրջ պիտի անցներ:  
Հեշտ եր գրվել թղթի վրա:  
Բայց յերբ հերթը հասավ գործին,  
Մարդիկ նայում ելին իրար  
Յեվ սպասում մեկի փորձին,  
«Ե՞ն, մարդիկ ենք խավարամիտ, —  
Սիրտ եր տալիս Մուքոն իրեն, —  
Զենք ձանաչի լավը ու բարին,  
Յեթե գործով չորդորեն...»:

Յեվ յերբ Մուքոն իր սերմացուն  
Զտելուց յետ ամբար տարավ,  
Ու դատարկեց պարկը լեցուն  
Համայնական շեղջի վրա, —  
Ասես պոկվեց կրծքից մի բան  
Ու խառնվեց ցորենի հետ:  
Վոնց վոր ընկալ մի ճանապարհ,  
Վոր չի տանի ել դեպի յետ:  
Յեվ նա յերկար, յերկար նայեց  
Իր ցորենի հատիկներին,  
Մինչև հասավ ուրիշի հերթ  
Յեվ ուրիշի սերմը բերին,  
Լցրին վրան... ելի, ելի...  
Ու ծածկեցին հետզհետե...  
Վոնց վոր ճամփորդ մի սկրելի  
Անհետացավ սարի յետև:

Աշխատում ե շափշափելով  
 Սերմագտիչ եղ մեքենան:  
 Ու հավաքված նրա բոլոր՝  
 Կատակում են ջահել կանայք,  
 — Նովրուզ, դու ել կոլխող մտար,  
 Բաս քեզ ել ով աղջիկ կտա:  
 — Մոլլի աչքին հարամ հայ ես,  
 Տերտերի մոտ՝ թյուրք տղայ ես:  
 — Նովրուզ, աղջիկ ունենայի  
 Աստված վկա, քեզ կտայի.  
 — Նովրուզ, գիշեր յերազ տեսա,  
 Դու կդառնաս հայի փեսա:  
 Ծիծաղում ե Նովրուզն ուրախ  
 Ու չարխի կոթն արագ պտտում:  
 Բայց տեսնում ե աչքի առաջ  
 Թյուրք աղջկա դեմքը տրտում:  
 Ախ, անիծված մոլլան խառնեց,  
 Թե չե Ասլին նրան կառներ.  
 Ասավ՝ ով վոր կոլխող մտնի,  
 Հայի աղջիկ պիտի գտնի:  
 Դրսում դեռ բուքն ե վրնջում:  
 Բքի յերգով գյուղն ե քնած:  
 Բայց բանում ե գիշերն անդուլ  
 Սերմագտիչ եղ մեքենան:  
 Աշխատում են նրանք հերթով՝  
 Յերկու սիրող յերխտասարդ,  
 Յերկու ազգով, բայց մի սրտով  
 Ու միենուն գործով հպարտ,  
 Առավոտյան դադարեցին:  
 Սերմագտիչն ելի կանդնեց:

Չնալած պարզ յեղանակին  
 Սերմը չելին բերում այլն:  
 — Ընկեր Սողո, սերմդ բեր Բ:  
 Պարապ կանդնել ե մեքենան:  
 ԶԲ վոր պետք ե գիշեր ցերեկ,  
 Միշտ, անընդհատ աշխատի նա:  
 Գյուղի կեսը նայում ե քեզ,  
 Պրովոկացիա կա քո մասին:  
 Պետք ե ինքդ գործով հերքես,  
 Վոր թշնամին չբամբասի:  
 — Ի՞նչ են ասում, ընկեր Սեան:  
 — Ինչ են ասո՞ւմ... ի՞նչ չեն ասում:  
 Եկ, ասում են այսպիսի բան,  
 Իբրև թե դու քո սերմացուն  
 Զես ուզում տալ կոլեկտիվին,  
 Վախենում ես անգլիացուց,  
 Վոր իբրև թե ասել ես դու,  
 Թե կոլխոզը կքանդվի:  
 — Ընկեր Սեան, սուտ են ասում,  
 Կուլակին ասեկուն:  
 — Սուտ են ասում... դու սերմացուն  
 Միացրու, վոր չխոսեն:  
 — Ճիշտ ե, — ասավ գործարանից  
 Գյուղ գործուղված ընկեր Կարոն, —  
 Յուրաքանչյուր մի կոմմունիստ  
 Պետք ե լինի դեկավարող:  
 Բայց վհնց պիտի դեկավարես —  
 Քո անձնական որինակով:  
 Թե չե, ինչքան խելոք ճառես,

Զի հավատա ճառիդ վոչով:  
— Նրա հերը համաձայն չի,—  
Հեղնեց մի կոմյերիտական:—  
Սերմի համար հորը կանչի,  
Սա իրավունք չունի իր տան:  
Նայեց Սողոն, խորը դադիված,  
«Ամբաբտավան եղ լակոտին»,  
Բայց բան չասավ, միտքը շաղված  
Ու գլխիկոր նայեց գետին:  
Ու գուրս յեկավ ընկեր Կարոն,  
Վոր ստուգի, անձամբ նայի  
Չտած ցորենը տմբարում  
Ու վիճակը մեքենաւի:

ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆ

ՄԵծ բազմություն և հավաքվել գյուղամիջում:  
Աղմկում են, բարձր լալիս ու անիծում:  
Տղեք շտապ գուրս վազեցին գյուղաբորհոգից  
Դեպի այն կողմ, ուր ամբոխն եր ժողովրդի:  
Տեսան՝ Սանթրոսն իր ծղրտան պառավակ առած,  
Իր մեծ հարսի, յերկու փոքրիկ թոռների հետ  
Գյուղամիջով անց ե կենում լալահտուաչ,  
Հնամաշ ու պատառուուն շորերի մեջ:  
Լաց են լինում մանուկները սրտապատառ:  
Լալիս են ձեն ձենի տված հարս ու կեսուր:  
Չների մեջ, ժողովրդով շրջապատ լած,  
Վեր են կալե անսասելի մի վայնասուն:  
— Այ գեղացիք, հարեաններ,  
Կորցրել եք խիղճ ու հոգի.  
Չեն հանեք ե, ի՞նչ եք կանգնել.  
Այ ուղտս ձեր դըռան չոքի:

Շշմեց կարոն ես խաժամուժ տեսարանից  
Ու հաբցական նայեց ընկեր Փարսկանին:  
Գարսկանի սրտով ցասման սալսուռ անցավ:

Աւզեց իսոսի, բայց Սանթրոսը շուտ մոտեցավ:  
 — Քաղաքից ես յեկել, ընկեր,  
 Գլխիս վրա տեղ ունես դու.  
 Զարըդ տանեա, վոտքդ ընկնեմ,  
 Ման հմ գալիս քեզպես մարդու.  
 Բան չթողին, զլիսիդ մատաղ.  
 Վոչ հաց, վոչ շոր, վոչ կարկատան:  
 Յերեք հոգով տունս մտան,  
 Լիրը, անզգամ խոսքեր ասին,  
 Զանել հարսի պատվին դիպան  
 Են Ալեքսանն ու Աղասին:  
 — Սուտ ես ասում, այ հալեռ,  
 Բացականչեց քեռի Մուքոն: —  
 Յես նրանց հետ ելի չլ վոր...  
 Շատ խելացի արարմունքով  
 Քեզ մասսայի վճիռն ասին:  
 Զեռ չափին վոչ քո հարսին,  
 Վոչ ասացին ավելորդ խոսք,  
 Վոչ ել առին տանից մի չոփ...  
 Ե՞ն, Խուզանի Քարափն ել հո  
 Ապուպապիդ քյավշանը չեր:  
 Մենք վեր կալանք գեղի կամքով,  
 Գեղի մասսան եր վորոշել:  
 Դեռ դու գյուղում տներ ունես,  
 Եդ տներում ապրիր ելի:  
 Ի՞նչ ես ընկել ձների մեջ,  
 Հավար կանչում, թրե գալի:  
 Աղմբկեցին ամեն կողմից, իրար անցան:  
 Զարթնեց ելի թու վայական քնած վողին,  
 Կապը կարեց հազարլեզու պրովոկացիան  
 Ու հին ու նոր վեճերն իրար խառնըցին:

— Լավ են արել, աչքը հանել...  
 — Սովորել եր մարդ սպանել...  
 — Պրովոկացիա յե ուղակի ..  
 — Քշել գլուղից լիրը կուլակին...  
 — Ո՞վ և կուլակ... կուլակ զտար...  
 — Կովդ մորթեցիր... կովսոզ մտար...  
 — Ո՞վ թույլ տվեց Ալեքսանին...  
 Մարդ աքսորի ու թալանիւ...  
 — Սոցիալիզմ և կառուցում...  
 — Պապի վրեմն և լուծում...  
 — Լաշինն աղջիկը տվեց...  
 — Խելառվել և խեղճ տղեն...

Ով պաշտպանում եր, հավատում Ալեքսանին,  
 Արգեն զտել ու միացրել եր սեր Խացուն:  
 Ով չեր հանել վոչ մի հատիկ իրա տանից,  
 Նա Սանթրոսի խոսքերին եր հավատ տածում:  
 — Յես կը քննեմ սրա հարցը. — ասավ Կարոն, —  
 Իսկ մինչեւ այդ, այս գեղեցիկ արե որով,  
 Յերբ կատաղած բուքը հազիվ և հանդարտել՝  
 Պետք և շտապ հորեր բանալ սերմը զտեր:  
 — Ի՞նչ եք զոռում մասսային...  
 — Հեռագիր կա Մոսկվայից...  
 — Վոր կոլեկտիվը ցրեն...  
 — Կոմ կուսրջինն ել վրեն...  
 — Մեզ խարում եք. . թալանում...  
 — Սերմն ու տավարը տանում...  
 — Յեթե Սողոն չի ստում...  
 Ինչու ինքը չի զտում...  
 — Սողոն զտում ե հրես...  
 — Զես հավատում, գնա՞ տես...

Աղմկելով գնացին գեպի Սևանի տուն,  
Ուր անդադար սերմազափէն եր աշխատում:  
Սողոն, իրոք, իր սերմացուն զտել, ճեսո  
Հավաքէլ եր ջվալներում իր սեփական,  
Դարսել եր ջոկու քիմիական հաստ մատիսով  
Բոլորի վրա զրել «Սոզո Սքրահամյան»:  
— Իր անունս ել զրեք վրեն,  
Բացականչեց Մուշեղ ամին. —  
Վոր եղան ե-սերմս բերեմ: —  
Ու գուրս թռավ վոնց վոր քամի:  
— Ցեթե անուն կար զրելու...  
Բաս եղ վոնց եք իմս խառնել: —  
Խաչոն հուզված շարժեց զլուխն.  
— Ե... ես չելավ, բարեկամներ ։  
Ու Գարսկանը հոգնած ու տրտում  
Ուշ յերեկոյան տուն վերադարձավ:  
Դեռ զնգում ե զիւ այրբվող զլխում  
Կանանց ազմուկը՝ վորպես սուր մի ցավ...  
Նիստը խառնեցին մի ակնթարթում  
Ու հարձակվեցին զոմերի վրա:  
Վոնց եին իրար մազերը փետում,  
Վոնց եին գոռում, զգգում / լար...  
Սբելի կինն եր՝ ամենից առաջ  
Յեղներն արձակեց, քշեց գեպի տուն:  
Ալդ նա յեր՝ նա յեր, բարձրածն զսուաց.  
«Կորչի կոլեկտիվ, բայլշեկություն...»:  
Ներս մտան հուզված նովուզն, Ալեքսանն,  
Մուքն, Աղասին, Վասոն ու Շիրինն.  
— Ե՞ն, ընկեր կարոն զուր գնաց շրջան,  
Նա կհամոզեր կատաղածներին:

— Վճնց կհամոզեր, ընկեր Աղասի, —  
Հեղնեց Գարսկանն, — ինքն' ըս ենք անում:  
Յես հազար անգամ վաղոյին ասի.  
Ախալեր, մոռացի Սիրիբի անունն:  
Իսկ նա բոլորին՝ «Սիրիբ կքշեմ»,  
«Կամ կոլխոզի հետ, կամ կուլակների»:  
Իսկ կատարածուն, են կակաղ նշեն  
Տներն եր մտնում շամփուրը ձեռին:  
Յեվ խուզաբկել եր նա միքանի տուն.  
«Թթթթազցըրել եք. հհհհանեք սերմացուն»:  
Խաչոյի կինն ել տվել եր զլխն  
Ու գուրս եր արել կակաղ յերեխին:  
— Ո՞վ ե թույլ տվել — ասում եմ, — նշե,  
Վոր գու շամփուրով տուն ես խուզաբկում:  
— Բըր...բըրիգադն ե եղպես վորոշել, —  
Ալեքսանը թե՝ «վոչ մի վորոշում»:  
— «Յես վորոշեցի, — ասում ե նշեն, —  
Բա հերիք չելմավ կուլակին լսեն»:  
Եսպես ե ահա մեր զիսցիպլինան:  
Եսպես, ընկերներ, հեռու չենք զնա:  
Կուլակն ել հիմա հենց ալդ ե ուզում,  
Վոր մասսաները մեր դեմ զրգոի.  
Հենց ալդ եր ալսոր կանանց ժողովում  
Մտքեր խմորեց, բորբոքեց կոխվ:  
— Հապա Սողոյի ջվալները... հեշ...  
Դարձել ե զլուղում մատի փաթաթան, —  
Պոռթկաց Ալեքսանն, — Ու ինքն ել ձղեց,  
Յերբ ծղբատալով կանաչք գոմ մտան:  
Յեվ յեթե Զարեն վրա չհասներ,  
«Պուճուր» Վաղոյին կքրքրելին:

Վոնց ելին ճշում... վայ, անիծվածներ...  
 Բայց լավ են լսում ընկեր Զարեխն:  
 Մուքոն բորբոքվեց.  
 -- Ինչքան ել ճշան՝  
 Մենք մեր կոլեկտիվն առաջ կտանենք,  
 Արելի կիններ՝ են քած կչկչան՝  
 Կանանց զրգուել ու խելքից հանել:  
 Բայց յեթե ինքը—տղամարդն ուղի,  
 Կարող ե իրա կնկան համոզի:  
 Բաս վհնց ե, իմ կինն աղմուկ չի հանում,  
 Շատ ել տանը հա չեմ-չում և անում:  
 — Ախար Արելին ով հանեց միջակ,—  
 Մղկըտաց Շիրինն ու կանգնեց վոտի: —  
 Վոսկի ունի նա թաղած մորի տակ,  
 Հերվա չարչին ե ախար շանվորդին:  
 Հիմի թագցրել, միջակ ե գրվել,  
 Ու կոլեկտիվի սրտումը խրվել,  
 Վոր թունավորի, քանդի, քայքայի,  
 Բերի, դուրս հանի իրա թայֆային:  
 Բա արադ ծախող ժամարի Սամոն,  
 Բա մուֆթա-խորակ Զուռնաչի-Զարին,  
 Բա Զաթնանց Գևոն, են ել կոմսոմոլ—  
 Այ թե ովքեր են խորթ ու խառնակիչ:  
 — Զե, Սևան, պետք ե կատարել զտում —  
 Պնդեց Վասակն իր տեսակետն ելի:  
 Ավելի լավ ե մնա հարցուր տուն,  
 Բայց իրար կպած ու անդրդվելի:  
 — Ճիշտ ե, յես գեմ չեմ զտումին, Վասակ,  
 Կարոն դրա համար գնաց Ալափարս:  
 Հարցը արջկոմում նա լավ կքննի.

Հենց, վոր յետ յեկալ՝ կանցնենք զտումին.  
 Այո, կոլխոզում կան մի շարք տարրեր,  
 Վոր կոլխոզի դեմ թույն են խմորում.  
 Զտում անպայման պետք ե կատարել  
 Նաև բջիջում ու կոմսոմոլում...  
 Յեվ նստած անքուն մինչեւ լուսաբաց՝  
 Կննում են զտման թեկնածուներին:  
 Դրսում բորանն ե վոռնում գաղաղած  
 Զարկվելով փայտե խարխուլ դռներին:

ԳԼԽԱՊՏՍՈՒՅՑՏԻՑ ՀԵՏՈ

«Ե՛ն, աջացել ե կարծես ընկեր Ստալինը...»: —  
Մտածում ե կոտրված Սամսոն Սաղաթելյանն: —  
«Դիե արի իստ նահանջիր... ես զալմաղալին ել  
Խոստովանիր ամեն տեղ, թե արել ես սխալ...»:  
Ու լրագրի ճակատից նայում ե խստադեմ  
Այն անողոք հոդվածի վերնագիրը նորից:  
Յեկ ինչ վերավորական վերնագիր ե գտել.  
«Գլխապույտ (հասկացա՞ր) եաջողություններից»:  
Յեկ տեսակետն ե ճալունում նա որջկոմի նիստին:  
Այս, պետք ե «նահանջիլ» բոլոր կոլխոզներում:  
Խոկ կենտկոմի ցույց տված սխալների մասին,  
— Պետք ե անել, վոր գրանք մեզ չեն վերաբերում:  
Զենք կատարել այնպիսի քաղաքական սխալ,  
Վոր բանաձև ընդունենք, բարձր խոստովանենք:  
Զի կարելի ամեն որ խոստովանանք խաղալ  
Ավտորիտետ գցել ու վոտնակոխ անել:  
Սակայն ընկեր Սամսոնի տեսակետը չանցավ:  
Խոստովանեց շրջկոմն իր սխալները բուռը:  
Յեկ ակտիվի ժողովում կարդացին բարձրածայն՝  
Աղդանունը Սամսոնի անվերջ հոլովելով:

կենտկոմը լետ տարավ շրջկում քարտուղարին՝  
իր կատարած կողմտագույն սխալների համար:  
Նա հրահանդ եր տվել գյուղեր մեկնողներին.  
«Բոսանչորս ժամվա ընթացքում... համատարած»:  
Ու հղել եր հեռագիր ընկեր Ստալինին,  
Խոկ պատճենն ել ուղարկել Հայաստանի կենտկոմ՝  
թե հասել ենք ու անցել վոլգի ան շրջաններին  
Ալափարսի չքավոր-միջակների կամքով....

Ու գյուղերում, ժողովներում,  
Փողոցներում, թերթերի մեջ  
Կոլխոզական կյանքն ե լիսում  
Հոսանքներով իրարամերժ:  
Շողշողում ե ընկեր Սողոն -  
Նախագահը գլուղխորհրդի.  
— Յես են գլխից ելի բոսում  
Զոռ ենք անում ժողովրդին:  
Քեֆը քոնն ե, քավոր Մուշեղ,  
Կովդ տրի տար ու կթի.  
Ընկեր Ստալինն ե վորոշել.  
Կուզես կոլխոզ ել մի մտի:  
— Հա, քեզ մատաղ, ընկեր Սողոն,—  
Գոչեց Մուշեղն ուրախ-ուրախ:—  
Հենց շրջան եմ տանում բողոք  
Եղ Մանասենց տղի վրա:  
Սխալեր, նա յեր վոտքի հանել,  
Թե չե ու իր կոլխոզ յեկող:  
Մի գիր գրի գործկոմ տանեմ,  
Նախագահին տամ իմ ձեռքով:  
Գարսեանն ե, ասեմ պիտի

Գլխապուլյատ ու քյալլագյոզ:  
Իսկ մեր Սովոն ժողովրդին  
Չի ել ասել՝ արի կոլխոզ:  
Պիտի ասեմ՝ Գարսեանին  
Դյուզից քշեք, վոր դինջանանք:  
Հերիք զոռով կոլխոզ տանի՛  
Խելքից հանի խալխի կանանց:

Յեվ անհանդիսա գյուղի վրա  
Դիշերը սև նստել ե թուխու  
Վիճում են գեռ քնահարամ  
Ամեն գյուղում թե խրճիթում,  
— Աչք ես տնկել, հմ սրիկա,  
Մանասի շոռ Գարսեվանին: —  
Տեղաշորում կնկա վրա  
Ֆշշում ե գեռ Մուջեղ ամին:  
Կանայք ենոր ասլան դառած  
Իրենց տավարը յետ բերին,  
Իսկ զու, սարսաղ, տանդ սառած,  
Աչք ես տնկել խալխի ձեռին:  
— Ի՞նչ ես ուզում, մարդ, ինձանից, —  
Աղաղակեց կինն անհամբեր: —  
Յես կոլխոզից գուքս չեմ գալիս:  
Քո տավարն ե — զու, գնաս բերու  
Մուջեղ ամին իխոտ վրդովված՝  
Տվեց քացով կնկա կողին:  
— Հարամ լինի եսպիսի հաց,  
Եսպիսի կին ու անկողին:  
Վեր կըկենամ — կաղնի՝ փետով  
Կողն ու մօղդ կտրոբեմ:

Ինքս բերեմ հա, վոր հետո  
Կուլակ ասեն ու աքսորեն...  
Եգուց կերթաս և — հասկացմբ—  
Յեզներս յետ կպահանջես:  
Կասես, մարդս շատ ե հոժար,  
Ինքս, կասես, համաձայն չեմ..

Գոմի հոգում, ամբողջ գիշեր,  
Բուխարիկի կրակի մոտ,  
Քեռի Մուջոն խոսում ե դեռ,  
Ու համոզում համառ կնոջ:  
— Լսիր, մ գիմ, գարդ մի անի,  
Թող բացատրի ընկեր կարսն.  
Յես քեզ ախար հո չեմ տանի  
Կորստարեր հանապարհով:  
Խաբել եմ քեզ յերբ և իցե,  
Կամ ցանկացել եմ վատը քո.  
Ինքս ախար մի բան գիտեմ,  
Դործ եմ անում համոզունքով.  
Այ, ես մարդուն հանել բանից,  
Ուղարկել են մեզ ողնելու:  
Լսիր, թող նա պարզաբանի,  
Թե կոլեկտիվ ինչ ե բերում:  
Ու վալասի վրա նստած  
Մուջոյի պես ծալապատիկ՝  
Ընկեր կարոն ուրախ ժպտաց,  
Պատմեց հետո հատիկ-հատիկ:  
Պատմում ե նա մաշինի մեծ,  
Ազատարար ուժի մասին,  
Բանվորը յերբ նրան տիրեց

Ու կոլխողնիկ նոր գյուղացին:  
 Պատմում ե նա միասնական  
 Աշխատանքի ուժի մասին,  
 Վոր գետերին նոր հուն կտա,  
 Զե ու իմաստ ապառաժին:  
 Մինչ ուշ գիշեր պատմում ե նա:  
 Ու հարեան լերկու կանայք  
 Համառ նստած լսում են զեռ՝  
 Տալով կրկին ծանոթ հարցեր,  
 — Ասա, ախպեր, չի՞ կարելի,  
 Տրակտոր, մաշին ելի բերեն,  
 Տան չքավոր-միջակներին  
 Ու կոլեկտիվ ել չգրեն:  
 — Զե, այ քույրիկ, մի տրակտոր  
 Գեղի կեսին հեղիք կանի:  
 Ել վճաց կալա մի չքավոր,  
 Թեկուզ միջակ, զլուխ հանի,  
 Նա կամ անգործ պիտի պցի,  
 Ու ժանդուի պատերի տակ,  
 Կամ թե մարդկանց ջահազործի  
 Ու մի տարում դառնա կուլակ:  
 Եդ հո չելավ. ընդհակառակ —  
 Մենք վերացնում ենք կուլակին,  
 Վոր մեր ազատ հոգի վրա  
 Մարդը մարդուն չպլոկի:  
 Զե — մեքենան մեծ, միացյալ  
 Տնտեսություն ե պահանջում,  
 Հող ե ուզում լայնածավալ  
 Վոր մեջ ընկած բանի անդուզ:  
 — Եւ, ձեք լեզվին չենք դիմոնա,

Մարդիկ եք դուք ուսումնավոր! —  
 Ու հարեան լերկու կանայք  
 Դուքս են գնում ծիծաղելով:  
 — Զե, — կրկնեց Մազթաղ աղին, —  
 Յես կոլեկտիվ չեմ գա, ասիր  
 Չեմ բաժանվի իմ կթանից,  
 Կրաժանվեմ յես քեզանից:  
 Ու վեր կացավ շորորալով  
 Տեղաշորել բերեց տնից,  
 Փոեց վառվող բուխարու քով,  
 Վոր բեզարած հյուրը քնի:  
 Ու դիմացի թախտի վրա  
 Փոեց ուրիշ մի անկողին:  
 Փչեց ուժգին նավթի ճրագն  
 Ու մեկնըլեց մարդու կողքին:  
 — Ասում ես, բա կրաժանվեմ, —  
 Հանաք արավ Մուջոն մթնում:  
 Ահ ես տալիս ցերեկն անվերջ,  
 Գիշերն ելի տեղը մտնում:  
 Կոպերը պինդ փակեց կարոն,  
 Վորպեսզի շուտ քունը տանիք  
 Բայց ցնորում ե խավարում  
 Դպիսդը խուլ՝ գործարանի...  
 Կողն ե քերում հովաս քեռին,  
 Շուռ-մուռ զալիս տեղաշորում,  
 Բայց չի գալիս քուն աչքերին,  
 Զար մաքեր են զլուխը փորում:  
 Դրսում շներն աղմկալից  
 Մարդաւած են տալիս անվերջ:

Ո՞վ ե գյուղում գնում գալիս  
 Ես ցուրա ու մութ գիշերվա մեջ:  
 Չարագուշակ և մարդահաջն  
 Ուշ գիշերվա՝ եղ շների:  
 Հիշում ե՝ տաս տարի տռաջ  
 Եսպես եյին հաջում ելի:  
 Եսպես եյին ելի հաջում  
 Ու կատաղած վրա տալիս:  
 Ամբողջ գիշեր գեղամիջում  
 Մարդիկ եյին գնում գալիս:  
 Ցերք մութ ու լուս առավոտյան  
 Գյուղը հանկարծ գրավեցին  
 Ու կատաղած տներ մտան  
 Ցերկու Արամն Արզաքյանդցի:  
 Տներ մտան, ումը գտան,  
 Հայհոյերով գուրսը բերին:  
 Զեռքը զոսով տվին հրացան  
 Ու գոռացին.  
 — Հայդա, կոբվ...  
 — Ում դեմ, ախար, այ ձեզ մատաղ, —  
 Հարց եր տալիս Հովաս քեռին,  
 Ու յերերում քնաթաթախ  
 Անդլիական զենքը ձեռին:  
 — Գնա կովի, ու կիմանաս, —  
 Ֆշաց Աբելն ու կատաղի՝  
 Զին մտրակեց՝ առաջ գնաց,  
 Մարդ հավաքի վերի թաղից:  
 Ու Դղմաշն գեռ չհասած,  
 Դեռ չկոված, ընկան գերի:  
 — Ախտեղ բերեք, — են մեկն ասաց, —

Եղ խմբապետ — դաշնակներին:  
 Լալ վոր Սևանն այնտեղ եր գեռ  
 Բազեփկյան եղ բանակում:  
 — Թողեք գնան, — ասավ, — ախպեր,  
 Յես սրանց լավ եմ ճանաչում:  
 Ու բռնեցին միայն մի ոռու  
 Ովիցերի և Արելին:  
 Իսկ Արամներն արդեն վաղուց  
 իրենց խմբով ճղել եյին:  
 Իսկ ժողովուրդը մոլորդած,  
 Անվնաս տուն գարձավ նորից:  
 Ազատ շնչեց քեռի Հովասն  
 Ու կարծես, նոր ծնվեց մորից:  
 Նույն մարդեկ են ելի այսոր  
 Ուշ գիշերով գնում գալիս:  
 Ինչ վոր մի չար, խորհրդավոր  
 Լուր ե զբում շրջում ելի:  
 Զաթնանց Բեյրութն ու շիլ-Մանուկն  
 Ես մի շաբաթ գյուղում չկան:  
 Ասում են՝ կապ են պահպանում  
 «Կենտրոնի» հետ դաշնակցական:  
 Նախկին զոռերք փրփրակալած  
 Ման են գալիս շրջաններում:  
 Ամբողջ գիշեր շնահալած .  
 Գնում գալիս, զենք են բերում...  
 Կոլխոզի զեմ են կատաղել  
 Մի որ հանկարծ վրա կտան...  
 Հովաս քեռին վշաքաղվեց՝  
 Նախագալով մի մութ վտանգէ  
 Եեթե վաշանդ ե սպառնում

Խորհրդային իշխանությամն...  
 Միակ վորդին կոլեկտիվում...  
 Խոքը ակտիվ փոկի անդամ...  
 Յեթե հանկարծ են ատելի  
 Հայկ — Արամերը գան, տիրեն...  
 Կը զոռանան Զաթնանք ելի,  
 Քարափն ելի յետ կը խին;  
 Գուցե իրան և իը վորդուն  
 Հենց Քարափում տան սպանեն.  
 Վարկով առած յեղը թոսուն  
 Դեռ չձած՝ գոմից հանեն;  
 Սև տեսին եր... ու շների  
 Մարդանաշը սիրտ և քերում,  
 Վեր և կենում Հովաս քեռին  
 Նստում ելի տեղաշորում... —

Ցուրտ ե, ցուրտ, գիշեր, Մութ համատարած:  
 Ու ժայռերը ցից, մոտիկ ու հեռու,  
 Առնում են հաճախ մարդու կերպարանք,  
 Վոր մոտենում և կարծես խավարում:  
 Ու գյուղի ծայրին՝ ամուր փաթաթված  
 Վոշարի մաշլած մուշտակների մեջ,  
 Ճամփի յեղերքի փոսերը մտած,  
 Սպասում են մի խումբ կոմսոմոլիստներ.  
 Հայացքները սուր բնեռած մթին,  
 Հրացաներն ամուր սեղմած ձեռներում,  
 Սպասում են նրանք Զաթնանց թեյրութին  
 Վոր սողոսկում և մթին լեռներում:  
 Գնացել ենա, վոր զենք ձեռք բերի  
 Այդ մասին գյուղում բոլորը գիտեն:

Գիտի զենք բերի, վոր կուլտակներին  
 Զինի արշավոր սոցիալիզմի դեմ:  
 Պահել ե, գիտեն յերեսուն հրացան:  
 Զեն կարող, սակայն, հաստատել վրան:  
 Ուրեմն պետք է բերելիս բռնել:  
 Հենց դրա համար նրա մութ ճամբան,  
 Բոնել են մի խումբ կոմսոմոլիստներ:  
 Բայց չի յերեսում մթնում դեռ վոչով,  
 Ցից, մարդանման ժայռերից բացի:  
 Բամին և միայն սառցահար պոչով  
 Մարդից արշավոր վորպես վաշրի ձի:  
 Ու Վասոն հենված հրացանի փողին,  
 Խավարն և զննում ուրախ տագնապով:  
 Ու միտքը վորպես քամին կատաղի,  
 Թոշում և հեռու կայծակի թափով  
 Դեպի հեռավոր յեղերքներն իրա  
 Սոցիալիստական մեծ հայրենիքի,  
 Ուր շողջողում են գիրքերի վրա  
 Սվինները սուր կարմիր բանակի:  
 Ուր դեռ յերեկ եր, վոր հերոսական  
 Հարված հասցըրին Զին-Արենցան  
 Դեղին, սպիտակ զեներալներին,  
 Ու Խորհուրդների հանրապետության  
 Փառք ու գորավոր հաղթանակ բերին,  
 Վողջույն և տալիս ընկեր Բլյուխերին  
 Կոմյերիտ Վասոն արթուն յերազում  
 Յեզ աչքը հառած ձերմակ խավարին՝  
 Մարտական գրոհի ժամին և սպասում:  
 Հիմա կերեա մթնում թշնամին —  
 Զարնանց Բեյրութի խումբը սրիկա,

Վորը չի թեպետ գեներալը չին,  
Սակայն հեռավոր մասնիկն ե նրաւ:  
Նույն ե թշնամին — Զին-Արևելյան  
Ճակատից մինչև այստեղ — Քարաշամբ:  
Դասակարգային նույն արյունլըվա  
Պայքարն ե սրվում նույն ատելությամբ:  
Յեկ այդ պայքարում, ամբողջ աշխարհում,  
Պայքարի բոլոր հրապարակներում,  
Բարիկադներում, գործարաններում  
Ու կովառզական անափ դաշտերում —  
Բանսկը Կիմի քայլում ե հրպարտ,  
Վորպես պայքարի արթուն ավանդաբոր:  
Ու Վասոն մտքի պայծառ աչքերով  
Տեսնում ե վորոշ, վոր Խորհրդային  
Իր հայրենիքի բոլոր կողմերում —  
Հենված հրացանին, գրչին, դաղդյանին —  
Նույն կուլի արթուն դիրքերն են բռնել  
Նույն բայլշելիկյան խանդով են յեռում  
Հազար ու միլիոն կոմսոմոլիստներ:

Իսկ այդ ժամանակ Գարսեանն արթուն,  
Լամպի լույսի տակ, լարված ու լրին,  
Յերկրորդ յերկաթի հոդվածն ե կարդում.  
«ՊԱՏԾՈՒԱՆ ԸՆԿԵՐ ԿՈՂԵՌԶՆԻԿՆԵՐԻՆ»:  
Քուրսու չորս բոլոր — ճառագայթաձև  
Փոած շորերը հողե հատակին,  
Հաստ վերմակներում ամուր փաթաթվել,  
Քնել են վաղուց յերեխա ու կին:  
Որորոցի մոտ քնել ե Զարենո  
Բայց նա չի ուզում խանգարել նրան:

Զարուհին այսոր շատ ե բեզարել  
Կանանց ժողովում հուզված, փրփրած:  
Ու ծերուկ Բարթոն խոմփում ե բամփ,  
Մեկմեկ քնի մեջ քամակը քորում:  
Կարդում ե Սևանն անդուլ աքնությամբ,  
Հետն ել ձախ վոտով մանկանն որոբում:  
Կարդում ե համառ և նրա մտքում  
Նորից ե բացվում պայծառ առավոտ:  
Սև ամպի նման կասկածը ցնդում,  
Ժպտում ե ուղին կրկին արևոտ:  
Կարծես Քարաշամբ զյուղումն ե գրել  
Արթուն զեկավարն այդ տողերը կուռ:  
Կարծես Սևանի մտքերն ե սրել,  
Քարձել ավելի հոտակ ու մաքուր:  
Ո՞վ ե գուրս գնում, իրավ, կովկոզից,  
Ամենից առաջ մեռած հոգիներ:  
Զունաչի — Զաքին, հայտնի պարագիտ  
Յեկ նրա նման մի շաք Զաքիներ:  
Յեկ մում «կորցրեց» կովեկտիվն ելի.  
Խորթ, թշնամական մի քանի մարդու,  
Թագնըլված կուլակ Զաթնանց Արելին,  
Վոր կուլակների ճամփան եր հարթում:  
Այո, գնացին Մուշեղն ու Գարասն,  
Անաստաս բիճան ու Վարդան ամին:  
Յեկ չի կարելի անվանել որանց  
Վոչ մեռած հոգի, վոչ ել թշնամի:  
Նրանց հեռանալն, այս, կոլխոզի  
Կորուսոն եր ծանր, բայց վոչ մշտական:  
Մենք նրանց այսոր գեռ չենք համոզել,  
Վազը կհամոզենք և նրանք կզան:  
Այո, այս մազումը չեր լոկ չարիք,

Այլէ բարերար, կազդուրիչ մաղում:  
 Սպասիր, Սողո, նա կծիծաղի,  
 Ավ վոր ամենից վերջն և ծիծաղում:  
 Ու Սկանն արթուն, լամպի լույսի տակ,  
 Հափում և թերթի սյունակները նեղ,  
 Յեկ նրա գլխում դառնում են հստակ,  
 Վառվում են վորոշ — մտքեր, ուղիներ:  
 Վաղը նա կելնի ու զինված արի —  
 Մեծ գեկավարի պայծառ մտքերով  
 Շարժումն անսասան կը զեկավարի,  
 Կկազմակերպի վճառական զրոհ...  
 Ու հետզհետե քունը ծանրաթի  
 Փոցում և կապտած կոպերը նրա:  
 Ու ֆարսեանը քնում և արգեն՝  
 Դրուխը դրած հոդվածի վրա:  
 Յեկ այդպես հիմա ամեն խրճիթում,  
 Ամեն ժողովում լարված ու լաին  
 Այն հոչակալոր հոդվածն են կարդում.  
 «ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ,  
 Ամեն մի բանվոր, ամեն կոլխոզնիկ,  
 Ամեն կոմունիստ, կոմյերիտական, —  
 Կրում և այն իր գրպանում հիմի,  
 Վորպես գրոհի կանոն ու պատգամ:  
 Այդ դասակարգի փորձն և հարաճուն  
 Կենտկոմի գործ ձեռքում կուտակիել  
 Այդ մեր լենինյան հանճարն և հնչում  
 Ընկեր Ստալինի ձայնում պողպատե  
 Այդ դասակարգի հանճարն և հստակ,  
 Վոր վորպես հոկա, պայծառ լուսարձակ  
 Լուսավորում և պայքարի ուղին,  
 Հավատ ներշնչում պայքարողներին:

ՏԱՍՆԵՐԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԹԻՌԵՑՔՆԵՐԻ ՍԵՂՄՎՈԽՄ ԵՆ

Գիշեր և մութ; համատարած:  
 Փուլել և գյուղը ցիր ու ցան.  
 Բերդի յետե, բերդի առաջ;  
 Գիտի ամբողջ յերկարությամբ:  
 Այդ մութ ու խուլ գլուղում հիմի  
 Չափում են լուս, միաժամնակ  
 Իրենց ուժերը — թշնամի  
 Տերկու աշխարհ, յերկու բանակ:  
 Ու հավաքված Արելի մու  
 Տերերը հին՝ Քարաշամբի  
 Դեռ սպասում են լուս, թունոտ,  
 Սուլակեցի տեր՝ Արշակին:  
 Կլանչում և շունն ելի մթնում:  
 Դուրս և վազում Արելն արագ:  
 Տերտերն ահա ներս և մտնում  
 Ձեռքին լցուն ատրճանակ:  
 Միրուք չունի, նոր և ստիրել  
 Ու բաց նամակ հղել թերթին,  
 Թե չի ուղում ելի խափել  
 Աշխատավոր ժողովրդին:

Պահել ե մուլթ սրտում, սակայն,  
Ատելությունը թունալի,  
Ու գալիք պես հալածական  
